ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 673

*02 դեկտեմբեր 2019թ.*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով 219¹-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 11 նիստի արձանագրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Թեղենիս առողջարանային համալիր>> ոչ առևտրային շահագործման և սպասարկման կոոպերատիվի նկատմամբ /ՀՎՀՀ 02702856, հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա 26 /՝ գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելու համար, նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 674

*02 դեկտեմբեր 2019թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Անահիտ Հայկազի Կնեյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N 2643032 տրված՝ 2009 թվականի հունիսի 10-ին), 0.06 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Պահլավունյաց փողոց թիվ 49:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 675

*03 դեկտեմբեր 2019թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սինամ Ավետիսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N 1201620 տրված՝ 2004 թվականի հոկտեմբերի 21-ին), 0.06 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Պահլավունյաց փողոց թիվ 47:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 676

*03 դեկտեմբեր 2019թ.*

### ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (ակտիվների և պարտավորությունների) ամենամյա՝ 2019 թվականի գույքագրման նպատակով ստեղծել գույքագրման կենտրոնական հանձնաժողով հետևյալ կազմով՝

| | | |
|---|---|---|
| Կենտրոնական հանձնաժողովի նախագահ | Համայնքի ղեկավար | Արթուր Հարությունյան |
| Անդամներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | Գարիկ Հայրապետյան |
| | Աշխատակազմի քարտուղար | Գարիկ Բաղալյան |
| | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Նարինե Խաչատրյան |

2. Գույքագրման աշխատանքները տեղերում փաստացի իրականացնելու համար ստեղծել գույքագրման աշխատանքային հանձնաժողովներ՝

1) Ծաղկաձորի համայնքապետարանի համապատասխան ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային առաջին հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Համայնքի ղեկավարի տեղակալ | Գարիկ Հայրապետյան |
| Անդամներ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Նարինե Խաչատրյան |
| | աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | Վարսիկ Հայրապետյան |
| Պատասխանատու անձ | համայնքապետարանի տնտեսվար | Ռոման Սիմոնյան |

2) <<Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության համապատասխան ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային երկրորդ հանձնաժողով՝ հետևյալ կազմով

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Համայնքի ղեկավարի տեղակալ | Գարիկ Հայրապետյան |
| Անդամներ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Նարինե Խաչատրյան |
| | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Արա Մեսրոպյան |
| Պատասխանատու անձ | <<Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն | Էդգար Հովհաննիսյան |

3) <<Ծաղկաձոր նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության համապատասխան ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային երրորդ հանձնաժողով՝ հետևյալ կազմով

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | աշխատակազմի քարտուղար | Գարիկ Բաղալյան |
| Անդամներ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Լեյլի Խաչատրյան |
| | աշխատակազմի առաջատար մասնագետ | Արփինե Ավետիսյան |
| Պատասխանատու անձ | <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն | Աննա Ասատրյան |

4) <<Ծաղկաձոր մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության համապատասխան ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային չորրորդ հանձնաժողով՝ հետևյալ կազմով

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | աշխատակազմի քարտուղար | Գարիկ Բաղալյան |
| Անդամներ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Լեյլի Խաչատրյան |
| | աշխատակազմի առաջատար մասնագետ | Արփինե Ավետիսյան |
| Պատասխանատու անձ | <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն | Հասմիկ Սարգսյան |

5) Ծաղկաձորի գրադարանի համապատասխան ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային հինգերորդ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | համայնքի ղեկավարի օգնական | Արտաշես Խաչատրյան |
| Անդամներ | աշխատակազմի առաջատար մասնագետ | Արփինե Ավետիսյան |
| | աշխատակազմի առաջին | Կարինե Հայրապետյան |

| | | |
|---|---|---|
| | կարգի մասնագետ | |
| Պատասխանատու անձ | աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, գրադարանավար | Կարինե Միքայելյան |

6) Ծաղկաձորի միջնակարգ դպրոցի համապատասխան ակտիվների /պարտավորությունների/ գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային վեցերորդ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | համայնքի ղեկավարի տեղակալ | Գարիկ Հայրապետյան |
| Անդամներ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Լեյլի Խաչատրյան |
| | աշխատակազմի առաջատար մասնագետ | Արփինե Ավետիսյան |
| Պատասխանատու անձ | Ծաղկաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն | Սուսաննա Եգորյան |

7) Ծաղկաձոր համայնքի տնկարանի համապատասխան ակտիվների / պարտավորությունների/ գույքագրման աշխատանքներն իրականացնող աշխատանքային յոթերորդ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | աշխատակազմի քարտուղար | Գարիկ Բաղդալյան |
| Անդամներ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Արա Մեսրոպյան |
| Պատասխանատու անձ | աշխատակազմի գլխավոր մասնագետ | Արմեն Արշակյան |

3. Գույքագրման աշխատանքները սկսել 2019 թվականի դեկտեմբերի 03-ին և ավարտել 2020 թվականի փետրվարի 10-ին:

Գույքագրման տվյալները հանձնել համայնքապետարանի աշխատակազմի հաշվապահություն ոչ ուշ, քան 2020 թվականի փետրվարի 15ը:

4. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Գարիկ Հայրապետյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 677

*03 դեկտեմբեր 2019թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով '<<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 84-րդ հոդվածով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2019 թվականի դեկտեմբերի 03-ից կազմակերպել և անցկացնել հանրային բաց լսումներ և քննարկումներ՝ Ծաղկաձոր համայնքի 2020 բյուջեի նախագծի քննարկման համար:

2. Հանրային բաց լսումներ և քննարկումներ կազմակերպելու և իրականացնելու աշխատանքների լիազորությունները վերապահել համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 678**

*03 դեկտեմբեր 2019թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սերգեյ Վանուշի Մելոյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N 1473512 տրված՝ 2003 թվականի հունիսի 4-ին), 0.06 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Պահլավունյաց փողոց թիվ 35/1:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 679

*03 դեկտեմբեր 2019թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

<<ԻՆՏՐԱ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող,մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների փողոց 19/2 հասցեում գտնվող 0,05665 հա մակերեսով (վկայական համար 10042019-07-0081) հողամասի,մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց թիվ 19/4 հասցեում գտնվող 0,04335 հա մակերեսով (վկայական համար 21052019-07-0053)հողամասի, մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց 21 հասցեում գտնվող 0,08 հա մակերեսով(վկայական համար 26082019-07-0101) հողամասերի միավորման հետևանքով առաջացած 0,18 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Օրբելի եղբայրների փողոց թիվ 21:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 680

*10 դեկտեմբեր 2019թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 83-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի <<Ծաղկաձոր համայնքի 2019 թվականի ծախսերի և եկամուտների եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին>> թիվ 14 որոշման թիվ 1 և 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 681

*10 դեկտեմբեր 2019թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի <<<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին>> թիվ 13 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 682**

*10 դեկտեմբեր 2019թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի <<<<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի ծախսերի և եկամուտների նախահաշիվները հաստատելու մասին>> թիվ 11 որոշման թիվ 1-3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 683

*11 դեկտեմբեր 2019թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սուրեն Վարազդատի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Խաչատուր Կեչառեցու փողոց 23 հասցեում գտնվող 0,124636 հա մակերեսով (վկայական համար 19092019-07-0073) հողամասի,մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց թիվ 23/2 հասցեում գտնվող 0,006364 հա մակերեսով (վկայական համար 22112019-07-0039) հողամասի միավորման հետևանքով առաջացած 0,131 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Խաչատուր Կեչառեցու փողոց թիվ 23:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 684

*11 դեկտեմբեր 2019թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

<<Ծաղկաձոր մանկական առողջարան>> ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N 2200045 տրված՝ 2006 թվականի նոյեմբերի 21-ին), 1.176 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 6:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 685

*13 դեկտեմբեր 2019թ.*

## ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետերով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 86 որոշումը, Գարեգին Կարոյի Խաչատրյանի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով օտարվող հողամասի, որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գարեգին Կարոյի Խաչատրյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող համայնք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց թիվ 5 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N14102013-07-0066 , կադաստրային ծածկագիր 07-005-0026-0083) 0.272 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասին և հողամասի վրա ամրակայված 776,63 ք.մ. ընդհանուր մակերեսով շինություններին կից, համայնք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց թիվ 5/3 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112019-07-0145, կադաստրային ծածկագիր 07-005-0026-0616) հասցեում գտնվող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, համայնքի սեփականություն համարվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերից 0.023 հա մակերեսով ազատ տարածքը կադաստրային արժեքով՝ 1 040 520 (մեկ միլիոն քառասուն հազար հինգ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Գարեգին Կարոյի Խաչատրյանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր:

3.Ընդլայնման հետևանքով առաջացած 0.295 հա մակերեսով հողամասին հասցեն թողնել նույնը՝ համայնք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց թիվ 5:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 686

*13 դեկտեմբեր 2019թ.*

### ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 17-ի <<<<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին>> թիվ 12 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 687

*16 դեկտեմբեր 2019թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Վլադիմիր Հարությունյան փողոց 15/2 հասցեում գտնվող 0,26065 հա մակերեսով (վկայական համար 16072019-07-0082) հողամասի,մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 15/3 հասցեում գտնվող 0,063362 հա մակերեսով (վկայական համար 16122019-07-0095) հողամասի միավորման հետևանքով առաջացած 0,324012 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 15/2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 688

*17 դեկտեմբեր 2019թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կարինե Նորիկի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N 2634010 տրված՝ 2009 թվականի օգոստոսի 19-ին), 0.094 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Տանձաղբյուրի փողոց թիվ 12:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր, (+374 223) 6-04-02, 6-04-03, tsaghkadzor.kotayq@mta.gov.am, meria@tsakhkadzor.a

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2019 թվականի N 689

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

<<Վիարդո>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 13122019-07-0125), Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 11 հասցեում գտնվող 0.5022 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած 0,0213 հա մակերեսով հողամասին (համաձայն բաժանման հատակագծի) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 11/61 իսկ մնացած՝ 0,4809 հա մակերեսով հատվածի հասցեն թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 11:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 690

*19 դեկտեմբեր 2019թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2019 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 16:00-ին, հրավիրել Ծաղկաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 691

*19 դեկտեմբեր 2019թ.*

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

<<Ռոյալ Ինտերթեյնմենտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել աղբահանության համար սահմանված տեղական վճարը վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի դեկտեմբերի 05-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ աղբահանության վճարի գումարի գանձման հարցի քննության նպատակով 2019 թվականի դեկտեմբերի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

<<Ռոյալ ինտերթեյնմենտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի 2,4/1 հասցեում ծավալել է գործունեություն: Վերջինիս և Ծաղկաձորի համայնքապետարանի միջև 28.12.2018թ. կնքվել է թիվ 22/2019 աղբահանության պայմանագիրը՝ համաձայն որի պայմանագրի ամսական վճարը կազմում է 130 000 դրամ: <<Ռոյալ ինտերթեյնմենտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չի վճարվել 2019 թվականի մայիս և հունիս ամիսների վճարը, որը կազմում է 260 000 դրամ:

Վերջինս վարչական վարույթի լսումներին մասնակցելու նպատակով ծանուցվել է/հիմք՝ փոստային անդորրագիր/, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 5-րդ հոդվածի՝

<<1. Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքով սահմանված դրույքաչափերի

սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:>>

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի.

<<3) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.>>:

Ելնելով ,վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 5-րդ հոդվածով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Ռոյալ ինտերթեյնմենտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից /ՀՎՀՀ 03019743, տնօրեն՝ Արտակ Սաքապետոյան, հասցե՝ ք. Երևան, Երզնկյան փողոց թիվ 44/ հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 260 000 /երկու հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես աղբահանության վճար:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:>>

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ